

նէր անիկա: Վասնզի մեռաւ, բայց չխօսեցաւ իր ընկերներէն: Մարդ կրնայ վստահիլ միայն իր ունեցածին: Ասէր պատճառը, որ մսավաճառը չառնուեցաւ գաղտնիքին մէջ: Մինա՛կ՝ մահուան դէմ: Պարզ ու հո՛ւ՛՛ երբ ներկայանար անիկա: Այսպէս էր խօսեր հիացիկ կրօնականին: Այսպէս խօսեցաւ այժարած Ակոյի քարայրին մէջ: Այսպէս ըրաւ Պրոսպայի բանտը, Մոխիրնոցին մէջ:

Ատանայի առաջնորդը անոր թելադրեց Սանասարեանի մէջ պատսպարում մը, այնքան քիչ կը ճանչնար անոր իմացական յաւակնութիւնները:

Ընկեր Մաթիկ յեղափոխական էր ու վարժարանի մը չորս պատերը տարբերութիւն չունէին բանտին պատերէն: Իր դպրոցը՝ հայրենիքը, եւ իր աշակերտութիւնը՝ հայժողովուրդը:

Յեղափոխական միտի՛ք: Այնքան շատ եղած են այս մարդերը, որ վէպի մը գրեթէ հասարակաց բարեխառնութիւն բաւ են ստեղծելու:

Թուրքերը զգացած էին ատիկա, բռնապետութեան օրերուն: Զեռք անցուած իւրաքանչիւր քոմիւքանի բացառիկ տեսակէ կենդանի մը կը նկատէին եւ կը զատէին զանոնք մեր ժողովուրդէն, որ լրտեսներ եւ ոչխարներ, շատ-շատ խելօք չորպանիներ միայն կրնայ բուսցնել իրենց կարծիքով: Բայց ոչ այս արտակարգ արարածները, որոնք մահուան համար այնքան անխոց էին իրենք զիրենք հանդերձեր, կազմակերպեր: ... Անգամ մը ճամբայ իյնալէ յետոյ միայն ընկեր Մաթիկը պիտի չափէր յիմարութիւնը իր ձեռնարկին: Բայց պիտի չափսոսար ալ միւս կորուստին համար, քանի որ առաջնորդը զինքը Եգիպտոս անցընելու միջոցներ ունէր իր տրամադրութեան տակ ու ինք մերժած էր այդ դասալքութիւնը: Զինուորը՝ «պատերազմի դաշտում» եւ ոչ թէ ժընեւի «փարում»:

Յիմարութի՞ւն: Դուք գտէք բառը:

Ես կը բաւականանամ դիտել տալով միայն, որ մարդկային մեքենան շինուած է այս հակասութիւն-